ՀՈՒՇԱԳԻՐ
ՄԵԴԻԱՅԻ ԷԹԻԿԱՅԻ ՆՇԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղվերան, 7 հունիսի, 2025թ.
Լրատվամիջոցների ինքնակարգավորման
նախաձեռնության տարեկան համաժողով

Մենք՝ Լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնությանը մասնակցող ներքոստորագրյալ լրատվամիջոցներս,

Հաշվի առնելով

- հանրության՝ իրազեկ լինելու իրավունքի իրացմանը և էթիկական լրագրության զարգացմանը նպաստելու մեր հանձնառությունը,
- Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի դրույթներով առաջնորդվելու մեր պատրաստակամությունը,
- Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի կարևորությունը՝ որպես լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգի կարևոր կառույց,

Ընդունում ենք հետևյալ դրույթները.

1. Մեդիայի էթիկայի նշանի սահմանումը

Մեդիայի էթիկայի նշանն ունի տեսողական արտահայտություն՝ լոգոտիպ, որն ապահովում է ակտիվ հղում դեպի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի կայքէջ (mediaethics.am) և ներկայացնում է լրատվամիջոցի անդամակցությունն Ինքնակարգավորման նախաձեռնությանը:
Էթիկայի նշանը հավաստում է լրատվամիջոցի հանձնառությունը՝ մատուցել Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրին համահունչ՝ ստույգ, անաչառ, բազմակողմանի, որակյալ և պատասխանատու լրատվություն:

2. Էթիկայի նշանի ստացման պայմանները

Էթիկայի նշանը ստանում են այն լրատվամիջոցները, որոնք

- ստորագրել են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը,
- ընդունել են Նախաձեռնության բոլոր վերաբերելի փաստաթղթերը, հետևողականորեն պահպանում են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրում ամրագրված կանոնները և լրագրողական էթիկային առնչվող խնդիրների լուծման հարցում համագործակցում են ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետ:

3. Էթիկայի նշանի կիրառման կարգը

Լրատվամիջոցները էթիկայի նշանը տեղադրում են իրենց կայքէջերում, տպագիր պարբերականներում, ինչպես նաև սոցցանցերի իրենց էջերում՝ այդպիսով ընդգծելով իրենց նվիրվածությունը լրագրողական էթիկայի սկզբունքներին։

4. Հանձնառությունը

Էթիկայի նշանը կրող լրատվամիջոցները

- պահպանում են լրագրողական էթիկայի կանոնները՝ ամրագրված Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրում,
- ընդունում են (ԴՄ աշխատակարգի նախատեսած դեպքերում՝ հրապարակում են) ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությունները, փորձագիտական կարծիքները եւ հայտարարությունները,
- մասնակցում են էթիկական թեմաներով քննարկումներին և վերապատրաստումներին։
- վարում են թափանցիկ գործունեություն։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը կարող է դադարեցնել էթիկայի նշանի օգտագործման իրավունքը՝ լրատվամիջոցի կողմից լրագրողական էթիկայի սկզբունքների պարբերական և միտումնավոր խախտման կամ ինքնակարգավորման գործընթացից շարունակաբար հրաժարվելու պարագայում։

5. Միացում հուշագրին

Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ լրատվամիջոցները, որոնք չեն մասնակցել 2025թ. համաժողովին, կարող են միանալ սույն հուշագրին՝ լրացնելով միացման ձևաթուղթ և հաստատելով իրենց համաձայնությունը նշված դրույթներին։